Հաշվետվություն

2024 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը Բելգիայի Թագավորություն, (Բրյուսել) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորություն, Բրյուսել, 2024 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը

3. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիա

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի նիստին

5. **Քննարկված թեմաները.**
   Նիստի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - Ասոցիացիայի ֆինանսական հաշվետվությունը,
   - 2025 թվականի գործառնական պլանը և բյուջեն,
   - «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացում՝ ներառյալ հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs),
   - Ռիսկերի արձանագրումը,
   - Անդամակցության ռազմավարությունը և կայունության ռազմավարությունը,
   - Ի՞նչ է Տվյալների պետական քաղաքականության կենտրոնը,
   - Եվրոգեոգրաֆիքսի և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի (Եվրոպայի տարածաշրջանի) միջև հետագա աշխատանքների կազմակերպում:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Հաստատվեց «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կառավարման խորհրդի հերթական նիստի օրակարգը, որի շրջանակներում ներկայացվեցին կառավարման խորհրդի դերն ու պարտականությունները, նախորդ հանդիպման արձանագրությունը, գործողությունների մատյանների վերանայման և «Բաց (հասանելի) քարտեզներ Եվրոպայի համար 2» (OME2) ծրագրի գործառնական թարմացման հարցերը՝ ներառյալ հիմնական կատարողական ցուցանիշները (KPIs): Անդրադարձ կատարվեց ֆինանսական հաշվետվությանը և տարեվերջի կանխատեսմանը, ինչպես նաև «Եվրոգեոգրաֆիքսի» երկարաժամկետ կայուն զարգացմանը: Անցկացվեց «Եվրոգեոգրաֆիքսի» և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի միջև համատեղ նիստ, որին մասնակցում էին Մալթայի, Մեծ Բրիտանիայի, Բելգիայի, Նորվեգիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Իսպանիայի, Լատվիայի, Սերբիայի, Սլովենիայի, Լեհաստանի, Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները: Ղեկավար կազմով նիստին մասնակցում էին Հայաստանի, Գերմանիայի, Բելգիայի, Լատվիայի, Ֆրանսիայի և Սլովենիայի ներկայացուցիչները: Նիստի ընթացքում ողջունվեց հանդիպման նախաձեռնությունը, որը թույլ է տալիս համատեղ պլանավորել հետագա զարգացման ուղղությունները: Կարևորվեցին յուրաքանչյուր կազմակերպության գործունեության դերն ու նշանակությունը: Խոսվեց աջակցության, առավելությունների և հնարավորությունների բացահայտման, կրկնօրինակման նվազեցման, բացթողումները վերացնելու և արդյունքներն առավելագույնի հասցնելու մասին: Գործառույթների բաշխման տեսանկյունից մատնանշվեց միասնական նպատակներին հասնելու համար փոխադարձ համագործակցության և աջակցության կարևորումը ասոցիացիայի և ՄԱԿ-ի երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների Եվրոպայի տարածաշրջանի կոմիտեի կողմից:

Անցկացվեցին փոքր խմբերով քննարկումներ: Հանդիպման ընթացքում նշվեց «Եվրոգեոգրաֆիքս» ասոցիացիայի կողմից գիտելիքների փոխանակման նպատակով կազմակերպված 30 միջոցառման մասին, որին մասնակցել են նաև Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները: Անդրադարձ կատարվեց «Բաց քարտեզներ Եվրոպայի համար-2» ծրագրին, քննարկվեցին ծրագրի հետագա ֆինանսավորմանը վերաբերող որոշ հարցեր: Վերջինս հեռանկարային նախագիծ է, և կարևոր է մասնակցությունը այս համակարգի ստեղծմանը, որն աջակցելու է Եվրոպային միասնական ստանդարտներով ստեղծված քարտեզներ ունենալու հարցում:

Քննարկումների ընթացքում նշվեց, որ բանակը ևս կարիք ունի ինտեգրված

տվյալների, սակայն դրանք առկա չեն, և բանակը հետաքրքրված է ինտեգրված տվյալների առկայությամբ: Շեշտվեց, որ եթե երեք տարի որևէ երկիր չի վճարում տարեկան անդամավճարը, ապա պետք է հեռացվի ասոցիացիայից:

Հանդիպումն ամփոփվելուց հետո նախանշվեցին հաջորդ քայլերը և գործնական արդյունքները, որոնք պետք է ներկայացվեն «Եվրոգեոգրաֆիքսի» անդամներին և իրականացվեն ՄԱԿ-GGIM Եվրոպայի ռազմավարություն և աշխատանքային ծրագրի շրջանակներում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**.

Պայմանավորվածություն ձեռք բերվեց.

- 2025 թվականի մարտի 21-ին տեսակապի միջոցով հանդիպել և քննարկել ասոցիացիայի 2025 թվականի գործառնական պլանը և բյուջեի հաստատումը,
- 2025 թվականի հուլիսի 2-3-ը կազմակերպել պլանավորման և ռազմավարության հարցերով աշխատանքային հանդիպում (առերես) Բրյուսելի գլխավոր գրասենյակում,
- 2025 թվականի հոկտեմբերի 9-ին տեսակապի միջոցով անցկացնել ամռանը հաջորդող հանդիպում,
- 2025 թվականի դեկտեմբերի 3-4-ը առերես հանդիպել Եվրոգեոգրաֆիքսի կառավարման խորհրդի անդամների հետ Բրյուսելի գլխավոր գրասենյակում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**.

Գերմանիան առաջարկեց, որ ինտեգրված տարածական տվյալների նկատմամբ անհրաժեշտ է հսկողություն սահմանել և այդ տվյալները պահպանել անվտանգ միջավայրում, որի վերաբերյալ պատրաստվել է համապատասխան ուղեցույց:

Նշվեց, որ տվյալները օգտագործողների կազմը բավականին մեծ է՝ Nasa, Eurostat, EBM, Frontex և կիսված տվյալները ներդաշնակեցված են և այդ տվյալների հիման վրա օգտվողները կատարում են վերլուծություններ:

Առաջարկվեց ուշադրություն դարձնել վարչական միավորների, տրանսպորտի և ջրագրության (հիդրոգրաֆիայի) վրա և եթե լինի որևէ ֆինանսավորում

կկարողանան աջակցել տեխնիկական մակարդակի խորհրդատվության տրամադրման առումով:

Նշվեց, որ Եվրոպական պառլամենտին առաջարկվում է «Աշխարհատարածական տվյալների համապարփակ քաղաքականության շրջանակ» թեմայով նոր պիլոտային ծրագիրը և ընդգծվեց, որ համագործակցությունը պետք է հաստատվի մշտական ներկայացուցչության միջոցով, որի նպատակը հետագայում Եվրոպական պառլամենտի քաղաքականության մեջ տարածական տվյալների կարևորության թեման ընդգրկելն ու այն հետագայում քաղաքականություն դարձնելը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 10.12.2024 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում 20.11.2024թ. N 1037-Ա
3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
4 Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն, քաղաք Բրյուսել
5 Գործուղման ժամկետները 03.12.2024-05.12.2024թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2024 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիածառայության արժեք (դրամ)	460,000.00	460.00
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	206	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	84,684.54	
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	169,369.08	169.37
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) ԵՎՐ	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,797.3	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	155,392.0	155.39
Այլ ծախսեր	Ապահովագրական ծառայություն	1,350.0	1.35
Ընդամենը ծախսեր (դրամ)			786.11

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
10.12.2024թ.